ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ՏԻԳՐԱՆ ԹՈՐՈՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Թորոսյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Արծվիկ Մինասյանի, Արամ Սաֆարյանի, Ռաֆիկ Պետրոսյանի, Վարդան Բոստանջյանի, Արտաշես Ավոյանի, Հովհաննես Մարգարյանի և Շիրակ Թորոսյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հայաստանի Հանրապետության օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների պաշտոնային դրույքաչափերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

1. Հայաստանի Հանրապետության կառավարությունը պետական կառավարման մարմինների ղեկավար աշխատողների պաշտոնային դրույքաչափերի բարձրացման հարցը համարում է արդիական և լուծում պահանջող: Սակայն, խնդրի արդյունավետ լուծումը ենթադրում է նախ ոլորտի ծառայություններում ընդգրկված աշխատողների աշխատանքի վարձատրության համակարգի կատարելագործում, նյութական խրախուսման համակարգի ստեղծում, աշխատանքի վարձատրության չափերի միջև ստեղծված հարաբերակցության անհամասնությունների վերացում: Այդ նպատակով անհրաժեշտ է հանրային ծառայության միասնական վարձատրության համակարգի հայեցակարգի հստակեցում և մշակում: Հայեցակարգի հաստատումից հետո անհրաժեշտություն կառաջանա մշակել համապատասխան օրենսդրական փոփոխությունների փաթեթ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեի նախագիծը ձևավորելիս դրանց արդյունքում

անհրաժեշտ ֆինանսական միջոցների նախատեսում: Այդ նպատակով օրենքի նախագծի 3-րդ հոդվածն անհրաժեշտ է շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հոդված 3. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում 2009 թվականի հունվարի 1-ից:»:

2. Նախագիծն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված իրավական տեխնիկայի կանոններին: Մասնավորապես.

ա. նախագծի վերնագրում «փոփոխություն և լրացում» բառերն անհրաժեշտ է փոխարինել «փոփոխություններ» բառով,

բ. 2-րդ հոդավածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 2. Օրենքի 1-ին հոդվածում «400.000», 2-րդ հոդվածում «340.000», 3-րդ հոդվածում «325.000» և «300.000», 4-րդ հոդվածում «300.000», 5-րդ հոդվածում «5.000», 6-րդ հոդվածում «230.000», 11-րդ հոդվածում «220.000», 12-րդ հոդվածում «180.000», 13-րդ հոդվածում «140.000», 14-րդ հոդվածում «120.000» և 15-րդ հոդվածում «15.000» թիվերը համապատասխանաբար փոխարինել «800.000», «680.000», «650.000», «600.000», «600.000», «10.000», «460.000», «440.000», «360.000», «280.000», «240.000» և «30.000» թվերով,

գ. նախագիծը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր հոդվածով.

«Հոդված . Օրենքի 4-րդ հոդվածից հանել «Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահի տեղակալի» բառերը:

Հայտնում ենք նաև, որ ներկայացված օրենքի նախագծի ընդունումը, 2008 թվականի հուլիսի 1-ից կիրառելու պայմաններում, Հայաստանի Հանրապետության 2008 թվականի պետական բյուջեում կառաջացնի շուրջ 626.3 մլն դրամի լրացուցիչ միջոցների անհրաժեշտություն: Բացի այդ, համաձայն «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի, Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի աշխատակիցների աշխատավարձի ֆոնդի հաշվարկը կատարվում է օրենքով նախարարի տեղակալի համար սահմանված պաշտոնային դրույքաչափից, որի հետևանքով կառաջանա ևս շուրջ 216.0 մլն դրամի լրացուցիչ միջոցների անհրաժեշտություն և, հետևաբար, Հայաստանի Հանրապետության սահմանադրության 75-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին համապատասխան այն պետք է ընդունվի Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ օրենքի նախագիծը ներկայացված տեսքով ընդունելի չէ:

Միաժամանակ հայտնում ենք, որ ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս՝ հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Արսեն Համբարձումյանը:

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

034/607-08

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴԻՐ, ԳՈՐԾԱԴԻՐ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների պաշտանային դրույքաչափերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (26 դեկտեմբերի 2002 թվականի, թիվ ՀՕ-505), (այսուհետև՝ Օրենք) 5-րդ հոդվածում «, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահի տեղակալի պաշտոնային դրույքաչափերի» բառերը փոխարինել «պաշտոնային դրույքաչափի» բառերով:

Հոդված 2. Օրենքը լրացնել նոր՝ 15^1 հոդվածով հետևյալ բովանդակությամբ՝

«Հոդված 15^1. Սույն օրենքի 1, 2, 3, 4, 6, 11, 12, 13 և 14 հոդվածներում նշված պաշտոնային դրույքաչափերը, 5 հոդվածում նշված լրավճարը և 15 հոդվածում նշված ծախսերը 2008 թվականի հուլիսի 1-ից սահմանել նույն հոդվածներում նշված կրկնապատիկի չափով:»

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարկմանը հանջորդող օրվանից:

034/607-08